ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2014 թվականի N 398 - Ն

ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՌՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱՎԻՐԻ, ԼՈՌՈՒ, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՎ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԵՐԻ՝ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝

1) 2014 թվականի մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Վայոց ձորի և Տավուշի մարզերում ցրտահարության պատճառած վնասների մեղմման նպատակով «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով, ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի սերմացուների վաճառքով զբաղվող տնտեսավարողներից ձեռք բերել բանջարաբոստանային մշակաբույսերի սերմացուներ.

2) սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված սերմացուների (այսուհետ՝ սերմացուներ) ձեռքբերման համար օգտագործել 85000000,0 դրամ՝ «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության նպատակային հաշվեհամարից.

3) սերմացուները «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով՝ սեղմ ժամկետում անհատույց տրամադրել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Վայոց ձորի և Տավուշի մարզպետարաններին՝ 2014 թվականի մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության նշված մարզերում ցրտահարությունից առավել տուժած հողօգտագործողներին տրամադրելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Վայոց ձորի և Տավուշի մարզպետներին՝

1) սերմացուները մինչև 10 օրվա ընթացքում համայնքների ղեկավարների միջոցով հատկացնել ցրտահարությունից առավել տուժած համայնքների հողօգտագործողներին՝ համաձայն համապատասխան համայնքների ավագանիների կողմից հաստատված բաշխացուցակների.

2) սերմացուների հատկացումն ավարտելուց հետո 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն սերմացուների՝ ըստ համայնքների բաշխման, իսկ ցանքերի ավարտից հետո՝ ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի կատարված ցանքերի մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014 թ. ապրիլի 15
Երևան

398k.voroshum